ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**«---» փետրվարի 2022թ.** **N-----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 8-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
1-ԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասով՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Երևան քաղաքի ավագանու 8-րդ նստաշրջանի 1-ին նիստի օրակարգը /կցվում է/:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐԳՍՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

# ՕՐԱԿԱՐԳ

1. Երևանի ավագանու 8-րդ նստաշրջանի 1-ին նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևանի ավագանու 8-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը հաստատելու մասին:
3. Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
4. Հուշատախտակների տեղադրման մասին:
5. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
6. Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին:
7. Երևան համայնքի սեփականություն համարվող Շիրակի փողոցի հ.2ա/2 շենքի հ.604 բնակարանն անհատույց օտարելու մասին:
8. Գույք նվիրաբերելու մասին:
9. Կազմակերպված ծառայողական ավտո-կայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:
10. «ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերութ-յանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:
11. Երևան քաղաքում Լևոն Ներսիսյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:
12. Գույքը որպես նվիրաբերություն ընդունելու մասին:
13. Երևանի քաղաքապետի 2021 թվականի դեկտեմբերի 3-ի N4295-Ա որոշումը և «Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին:
14. «Երևանի Կենտրոնի աթլետիկայի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարման մասին:
15. «Երևանի Կենտրոնի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարման մասին:
16. «Երևանի Շենգավիթի սեղանի թենիսի և թենիսի մանկապատանեկան մարզադպրոց», «Երևանի Շենգավիթի ակրոբատիկայի և գեղարվեստական մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոց» և «Շենգավիթի նետաձգության մարզակումբ» համայնքային ոչ

առևտրային կազմակերպությունները վերակազմակերպելու, «Շենգավիթի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանափոխման և  կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին: